բարձր կը կենային սարփինայի ձողերուն վրայ պլլուելով՝ ու անանկ ձեռքէ ձեռք կ'անցընէին, ինչպէս որմնադիրները կ'ընեն երբ երդիքի կղմինտրերը կը նետեն։ Մ'իսկ բանիւ աս աւարառութիւնէ պէս զուարճալի տեսարան չէր կրնար ըլլալ, վերէն պտուղներուն թափելը, և կապիկներուն դուրս նետելը։ Այց մէյմ'ալ յանկարծ հրացանի ձայն մը լսուեցաւ, ու մէկ վայրկենի մէջ ամէն ալ պարտէզէն դուրս նետուեցան առանց ձեռուընին եղած աւարը թողլու, և ամէնն ալ մօտ անտառին մէջ ցրուեցան, ու ծառերուն վրայ ելան և ոտէ ոտ ցատքելով սկսան փախչիլ։

Խեղճ ձկնորս պարտիզպանը՝ որ ինքն էր հրացան պարպողը, շատ ուշ հասաւ, բանը բանէն անցեր էր, և գողցուած աւարէն քանի մը կտոր բան միայն գտաւ։ Մ'օտեցայ անոր, որ գանգրտելով սկսաւ ըսել, որ այդ անիծած կենդանիները շատ անգամ նոյն կերպով զինքը ու իր դրացիները խաղցուցեր էին։ "Լզերքին մօտ եղած խոշոր ծառերուն վրայ կ'ելլէն, ըսաւ, ու թէ որ ամենայն կերպով զգուշութիւն չըլլայ՝ ինչ որ վրանին գտնեն՝ կ'առնեն կը տանին,,։ Յցուց ինծի հրացանով սպաննած կապիկը, և տեսածիս պէս ձանչցայ որ անոնց գլխաւորին գիակն էր։ "Ահա այս էր, ըսաւ, խումբին գլխաւորը ոբուն վրայ նշանս առի, վասն զի գիտեմ որ ասոր սատկելէն վերջը բոլոր խումբը կը ցրուի, ու մէյմ'ալ աս տեսակ աւարառութեանց ձեռք չեն զարներ, ինչուան որ ուրիշ գլխաւոր մը ընտրեն, ասանկով քանի մը օրուան հանգստութիւս ապահովցուցի,,։ Խեղճ ձկնորսին ձեռքը քիչ մը ստակ դրի, ու կապիկը առի որպէս զի մորթը Լուրոպայ բերեմ,,։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ. Ծաղկագարմաններու մեծ զուարճութիւն մըն է՝ մի և նոյն արմատէն շատ տեսակ գոյներով ծաղկներ հաստատել, որն որ այնչափ աւելի մարդուս զարմանք կը բերէ, որչափ որ ինչ կերպով ըլլալը շատին անծանօթ է. հիմա մենք աս բանիս դիւրին կերպ մը սորվեցընենք։ Առ մէկ թղաչափ թանթրուեանի 1 ճիւղ մը ու մէջ տեղէն ճղքելով միջուկը հանէ, և անոր տեղը լեցուր մէջը ուզած ծաղկիդ հունտերը այլ և այլ գոյն ունեցող արմատներէն ժողվելով ու հողի հետ խառնելով. ետքը ան երկու կտորները վերայէ վրայ բեր ու թելով կամ գերձանով մը կապէ, ու հողով լեցուն թաղարի մէջ նոյն ճիւղը անկէ, և ուրիշ բուսոց պէս երբեմն երբեմն ջուր տուր։ Քիչ ատենէն անկած հունտերդ կը ծլին ու նոյն ճիւղին մէջէն վեր ելլելու ատեն մէկմէկու հետ կը միանան՝ անանկ որ աչքի մէկ ոտ մը միայն կ'երևայ. բայց երբ նոյն փողոտակին ծայրը կը հասնին, ճիւղերը նորէն կը բաժնուին ու ամէն մէկը իրեն հունտին յարմար այլ և այլ գունով ծաղկներ կու տան, որ տեսնողը կարծէ թէ մի և նոյն արմատէն է։ Աս կերպով կրնաս նաև այլ և այլ տեսակ ծաղկներ ալ հաստցընել մի և նոյն արմատէն, բայց պէտք է գիտնալ որ եթէ ցեղով ալ տարբեր ըլլան, ու այլ և այլ ժամանակի բոյսեր ըլլան՝ դժուար կը հանին։

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ. Թուոց մէջ յիրաւի զարմանալի բաներ կան որոնց վրայ մտածել ու խելք յոգնեցընելը չէ թէ միայն զուարճութիւն մըն է, հապա նաև միտք բանալու ալ շատ կ'օգնէ. ասոնց մէկ մէկն է նաև 37 թիւը, որն որ եթէ բազմապատկես թուաբանական յառաջատուութեան աս թուանշաններովս 3, 6, 9, 12, 15, 18, 21, 24 և 27. արտադրեալը կը ձևանայ իրեք նման թուանշաններէ. և նոյն թուանշաններուն գումարն ալ կ'ըլլայ հաւասար բազմապատկող թուոյն. ինչպէս

37,	37,	37,	37,	37,	37,	37,	37,	37
3,	6,	9,	12,	15,	18,	21,	24,	27
111,	222,	333,	444,	555,	666,	777,	888,	999

ՄԱՆՐԱՎԷՊ. Վարպետորդի գողին մէկը անգամ մը Գաղղիոյ թագաւորին պալատը կը մտնէ ու հոն սրահի մը մէջ դրուած ժամացոյցը կ'ուզէ վերցընել. երբ սանդուխը պատին կռթնցուցած կ'աշխատէր, Լուդովիկոս ԺԴ-ներս կը մտնէ։ Գողը առանց շփոթելու "Վախեմ սանդուխը կը սահի,, կ'ըսէ։ Թագաւորը կարծելով թէ տան մարդիկներէն մէկն է, ու հարկաւոր բանի մը համար ժամացոյցը վար կ'առնէ, կու գայ սանդուխը կը բռնէ, որ չըլլայ թէ փորձանք մը պատահի։ Գողն ալ հանդարտիկ կերպով կ'առնէ ժամացոյցը գուրս կ'ելլէ։— Քիչ ատենէն թագաւորին իմաց կու տան որ դրսի սրահին ժամացոյցը վերցուեր է, ու մի՞ ատեր է և ինչպէս ատեր է ջգիտցուիր։— "Բան չկայ, կ'ըսէ, թագաւորը. ես ալ գողակից էի, գողին սանդուխը բռնելով,,։

1 Տ՛. Մ՛ԻՐՎԷՐ աղաչը։